17586

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԵՔ-ԴՄ-13

21.10. 2021 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից «Գեղարեգ» կրթամշակութային երիտասարդական ՀԿ-ն, ի դեմս ՀԿ-ի ղեկավար Գրիգոր Դաշտոյանի՝ (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115 Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 10-ի «Կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N 1692-Ա/2 հրամանը, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհների հատկացման մրցույթի հանձնաժողովի 24.09.2021թ. N 04/21 արձանագրությունը՝ «Ռիսկի գործոն» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 2287.8 հազար (երկու միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարվելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.11. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության

գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և

կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1 կետում սահմանված գումարի 80%-ը կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5.2. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը 2021 թվականի հոկտեմբերի 15-ից 2021 թվականի դեկտեմբերի 15-ն է, իսկ հաշվետվությունների ընդունման ժամկետը՝ մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ը:

7.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2021 թվականի հոկտեմբերի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ *հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն* լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն N 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732 Պատվիրատուի ստորագրությունը Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ **Վահրամ Գասպարյան** /ստորագրություն/ Կ.Տ.	«Գեղարեգ» կրթամշակութային երիտասարդական ՀԿ ՀՀ ք.Գավառ, Պետրոսյան 24 բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Գավառ» մ/ճ, հասցե՝ ք. Գավառ, Հ/Հ 1150003164444463, ՀՎՀՀ 08418049 gdashtoyan@gmail.com ՀԿ-ի ղեկավար՝ **Գրիգոր Դաշտոյան** /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված 1
2021թ. հունվարի 21-ին
կնքված N ԵՔ-ԴՄ- 13 պայմանագրի

«Ռիսկի գործոն»
դրամաշնորհային ծրագրի

Ծրագրի նկարագրություն Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Համաձայն ՀՀ կառավարության 20 մայիսի 2021 թվականի N 827-Լ որոշման՝ Բնակչության առողջության պահպանումը և խթանումը, հիվանդությունների և այդ հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների կանխարգելումը երկրների գերակա խնդիրներից են: Առողջ ապրելակերպը կենսակերպ է, որն ուղղված է առողջության պահպանմանը և հիվանդությունների կանխարգելմանը: Մարդու առողջությունը պայմանավորող գործոնների 50%-ը պայմանավորված է նրա կենսակերպով: Առողջ ապրելակերպի ամրապնդումը սկսվում է վաղ մանկական տարիքից, իր մեջ ներառում է առողջ և անվտանգ սննդի օգտագործումը, ֆիզիկական ակտիվությունը, օրվա ռեժիմը, բավարար քունը, անվտանգ վարքագծի պահպանումը, վնասվածքների կանխարգելումը, ծխախոտի, ալկոհոլի, թմրանյութերի օգտագործումից զերծ մնալը, հոգեկան առողջության պահպանումը, սթրեսի կառավարումը, սեռական և վերարտադրողական առողջության պահպանումը: Մեծահասակների վաղաժամ մահացության 70%-ը պայմանավորված է դեռահասային տարիքում ձեռք բերված վարքագծով:

Նույն որոշման համաձայն ռիսկի գործոններ են համարվում ծխախոտի օգտագործումը,

Ֆիզիկական թերակտիվությունը, ավելցուկային քաշը և ճարպակալումը, անառողջ սննդակարգը, ալկոհոլի օգտագործումը:

Ինչպես ցույց են տալիս «Գեղարեգ» ԿՄԵ ՀԿ-ի կամավորների կողմից իրականացված հարցումների արդյունքները, համայնքների բնակիչների շրջանում անհրաժեշտ է բարելավել հանրային առողջապահության գրագիտությունը, ստեղծել առողջ վարքագիծ ձևավորող ուղենիշներ:

Հարցումների արդյունքում առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

- Առողջության հիմնական վարքագծային ռիսկերի վերաբերյալ իրազեկվածություն
- Առողջ ապրելակերպի քարոզչության իրականացում

Հիմնախնդիրը լուծելու նպատակով հանդիպումների ընթացքում առանձնացվել են հետևյալ առաջարկությունները.

- Ինտերակտիվ գործիքների կիրառման արդյունքում իրազեկել և համապատասխան գիտելիքներ փոխանցել երիտասարդներին
- Իրազեկել հանրությանը առողջության հիմնական վարքագծային ռիսկերի վերաբերյալ

Կազմակերպության փորձառությունը

Կազմակերպության առաքելությունն է. Երիտասարդների կարողությունների և համայնքային զարգացում, ՏԻՄ- համայնք կապի և հաղորդակցության որակի բարելավում,

ռազմահայրենասիրական դաստիարակություն, առողջ ապրելակերպի և հոգևոր- մշակութային արժեքների պահպանում:

«Առողջ ապրելակերպի» հանձնախումբը, որպես ՀԿ-ի առանձին ստորաբաժանում գործում է 2013 թվականից: Անցած տարիներին ՀԿ-ի կողմից իրականացվել են տարբեր ծրագրեր, որոնք ուղղված են եղել առողջ ապրելակերպի խթանմանը, վաղ մանկության շրջանում ծնողների կրթմանը, վնասակա սովորությունների դեմ պայքարին:

Կազմակերպության հիմնական նպատակները՝ ա/ կազմակերպել երիտասարդների և պատանիների զբաղվածության, կրթության և ժամանցի հարցերը, բ/ իրականացնել դասընթացներ, ոչ ֆորմալ ուսուցումներ, գ/ իրականացնել առողջապահական ծրագրեր, այդ թվում՝ նպաստել առողջ ապրելակերպի խթանմանը:

ՀՀ	Ծրագրի անվանումը	Ժամկետները	Ֆինանսավորող	Արժեքը	Նպատակ	Արդյունք
1	«Երիտասարդ խոսնակ»	Նոյեմբեր, 2018- մարտ, 2019	Save the children, Օքսիջեն հիմնադրամ, «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար»	716500 ՀՀ դրամ	Ներգրավել երիտասարդներին իրենց հուզող հիմնախնդիրների բացահայտման, դրանց լուծման մեխանիզմների մշակման և իրականացման գործընթացին:	Զարգացել են ներկայացնելու, բանակցելու, հանրային խոսքի հմտություններ, ցուցաբերում են հասարակական ակտիվություն, կարողանում են վերլուծել, բացահայտել և ներկայացնել համայնքային խնդիրները:
2	«Օրինյալ է այն զավակը, որ կրում ես քո որովայնում»	2017 ապրիլ-հունիս	Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	858 000 ՀՀ դրամ	Նվազեցնել Գեղարքունիքի մարզում պտղի սեռի խտրական ընտրության և հղիության ընթացքում կանխակալ ընտրության ցուցանիշները՝ հանրային	Փոխվել է երեխա ունենալը սեռով պայմանավորելու խնդրի վերաբերյալ մարզի բնակիչների բացասական պատկերացումները, վերաբերմունքն ու ընկալումները, ինչպես նաև կրճատվել են պտղի սեռով

					իրազեկման միջոցով:	պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները:
3	«Հանուն առողջության»	2017, սեպտեմբեր-դեկտեմբեր	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	1 990 600 ՀՀ դրամ	Բարձրացնել Գեղարքունիքի մարզի պատանիների, երիտասարդների և չափահաս բնակչության իրազեկման մակարդակը՝ ծխախոտի օգտագործման, երկրորդային ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ, նպաստել առողջ ապրելակերպի վարմանը և կարևորել հակածխախոտային պայքարում կամավորական աշխատանքը:	Բարձրացել է մարզի բնակչության իրազեկվածությունը ծխելու վնասակարության վերաբերյալ, նվազել է ծխախոտ օգտագործողների թիվը:
4	Կյանք հանուն կյանքի	2016 հունիս-օգոստոս	Save the children	1 398 500 ՀՀ դրամ	Հանրային իրազեկման միջոցով նպաստել Գեղարքունիքի մարզում պտղի սեռի խտրական ընտրության և հղիության ընթացքում կանխակալ ընտրության ցուցանիշների մակարդակի նվազեցմանը:	Փոխվել է երեխա ունենալը սեռով պայմանավորելու խնդրի վերաբերյալ մարզի բնակիչների բացասական պատկերացումները, վերաբերմունքն ու ընկալումները, ինչպես նաև կրճատվել են պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները:

5	«Մի ծխիր»	2013 թ.	Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	2 745 160 ՀՀ դրամ	Երիտասարդներին տեղեկություններ հաղորդել ծխախոտի վնասակարության ու հետևանքների վերաբերյալ	«Մի ծխիր» ինտելեկտուալ հեռուստախաղը կունենա իր դաստիարակչական ազդեցությունը: Առաջին հերթին ծրագրում ներգրավված երիտասարդներն իրենց ինտելեկտի զարգացվածությամբ կարող են օրինակ հանդիսանալ հեռուստադիտողների և հատկապես իրենց հասակակիցների շրջանում:

ՀԿ-ն ունի դասընթացներ, իրազեկման և առողջապահական ծրագրեր իրականացնելու մեծ փորձ: ՀԿ-ն ծրագրեր է իրականացրել ՀՀ ԿԳՄ նախարարության, Վորլդ Վիժն Հայաստան ՄԲԿ-ի, Եվրոմիության, Փրկեցեք երեխաներին, DVV միջազգային կազմակերպության, «*Ժողովրդավարական* կրթության հայկական կենտրոն» (Հայկական-*ՍԻՎԻՏԱՍ*)-ի, ՄԱԿ-ի հետ համատեղ, տրամադրված դրամաշնորհներով և սեփական նախաձեռնությամբ:

ՀԿ-ի գործունեությունը ներկայացված է www.youtube.com/geghareg ալիքում և www.facebook.com/geghareg սոցիալական ցանցում:

Կազմակերպությունն ունի ռազմավարական փաստաթղթերի մշակման (Գավառ *համայնքի հնգամյա զարգացման ծրագիր, ՏԱՊ, Գավառի քաղաքապետարանի երիտասարդական տարեկան միջոցառումների պլան), մասնակցային և թափանցիկության* բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպման փորձ:

«Տեղական ինքնակառավարում» հանձնախումբը, որպես ՀԿ-ի առանձին ստորաբաժանում գործում է 2013 թվականից: Անցած տարիներին ՀԿ-ի կողմից իրականացվել են տարբեր ծրագրեր, որոնք ուղղված են եղել տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումներին, մասնակցային կառավարմանը և այլն: ՏԻՄ ոլորտում իրականացված ծրագրերից են. «Համայնքային մասնակցություն և կառավարում», «TIMING- Տեղական Ինքնակառավարման Մարմինների Ինքնակառավարման Նոր Գործելաոճ»:

Նշված ծրագրերն իրականացվել են «Համատեղ» ծրագրով «Համայնքների ֆինանսիստների միավորման» փոքր դրամաշնորհների ծրագրերի շրջանակներում՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ:

2020 թվականից «Գեղարեգ» ԿՄԵ ՀԿ-ն հանդիսանում է «Համատեղ» ծրագրով իրականացվող «Տեղական ժողովրդավարության դպրոց»-ի Գեղարքունիքի մարզային գործընկեր կազմակերպությունը:

Ծրագիրը կմեկնարկի 2021թ. Հոկտեմբերի 15-ին և կավարտվի 2021 թվականի դեկտեմբերի 15-ին:

NN ը/կ	«Ռիսկի գործոն»						
	անվա-նումը	բովանդա-կությունը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործա-ռույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնա-հատման չափանիշները	Միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
	Նախապատրաստական փուլ		Հայտարարությունների տարածում կազմակերպության ֆեյսբուքյան էջում, անվճար հեռարձակում «Գեղամա» մարզային հեռուստաեթերով, պայմանավորվածությունների հստակեցում, երիտասարդական ոչ ֆորմալ խմբի ձեւավորում: Հարցաթերթիկների եւ google ձեւաչափով հայտադիմումների մշակում եւ տարածում: Պայմանագրերի կնքում, ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերում: Դասընթացների մոդուլների հստակեցում:		15-10.2021-20.10.2021	15.12.2021թ.	196000
	Գործողություն 1	**Երիտասարդական ոչ ֆորմալ 1 խմբի ստեղծում**	Հայտարարության տարածում Մասնակիցների ընտրություն 10-օրյա դասընթացի անցկացում	*12* երիտասարդ մասնակցելու է ֆորում-թատրոնի անցկացման վերաբերյալ 10-օրյա դասընթացի	15-24.2021	15.12.2021թ.	196000
	Գործողություն 2	***5 Ֆորում-***	Ֆորում- թատրոնի սցենարի ձեռբերում	**5** ֆորում թատրոնների	15.10-07.11.2021	15.12.2021թ.	613000

		թատրոնների անցկացում	Ֆորում- թատրոնի անցկացում Լուսաբանում	օգնությամբ շուրջ **100** քաղաքացի ծանոթանալու է անառողջ ապրելակերպ վարելու հետեւանքով առաջացող վտանգների մասին			
	Գործողություն 3	**Տեղեկատվական թերթոնների մշակում եւ տարածում**	Տեղեկատվության հավաքագրում Թերթոնի տարբերակի մշակում եւ դիզայն Տպագրություն Թերթոնների տարածում համայնքներում Լուսաբանում	***2000*** քաղաքացիներ իրազեկվելու են տեղեկատվական թերթոնների օգնությամբ	18.10-07.11.2021	15.12.2021թ.	163000
	Գործողություն 4	**12 սկեչերի նկարահանում**	Տեղեկատվության հավաքագրում Սկեչերի նկարահանում Սկեչերի տարածում սոցիալական ցանցերում	Ֆեյսբուքյան շուրջ **2000** օգտատեր **12** սկեչերի օգնությամբ ծանոթանալու են եւ մասնակցելու են առողջ ապրելակերպի եւ առողջ սննդակարգի խթանմանն ուղղված առցանց իրազեկման ն ու ներկայացրել են ելքային տարբերակներ	20.10-01.12.2021	15.12.2021թ.	353000
	Գործողություն 5	**Երիտասարդ խոսնակ**	Google ձեւաչափով հայտարարություններ ի տարածում Մասնակիցների հայտագրում, կանոնների ներկայացում	***25*** պատանիներ եւ երիտասարդներ մասնակցելու են երիտասարդ	20.10.2021-01.12.2021	15.12.2021թ.	385500

			Մասնակիցների ընտրություն եւ դասընթացի անցկացում «Երիտասարդ խոսնակ» միջոցառման անցկացում Խնդիրների, առաջարկությունների վերաբերյալ փաթեթների մշակում Լուսաբանում	խոսնակ միջոցառմանը, ներկայացրել են առողջ ապրելակերպի մշակույթի տարածման գաղափարներ			
Ընդամենը 1.906.500							
ԱԱՀ՝ 381.300							
Ընդամենը՝ 2.287.800							

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Գեղարեգ» կրթամշակութային
երիտասարդական ՀԿ
ՀՀ ք.Գավառ, Պետրոսյան 24
բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
«Գավառ» մ/ճ, հասցե՝ ք. Գավառ,
Հ/Հ 1150003164444463, ՀՎՀՀ 08418049
gdashtoyan@gmail.com
ՀԿ-ի ղեկավար՝
Գրիգոր Դաշտոյան

/ստորագրություն/

Կ.Տ.

22.10.2021 ԵԲԴՄ-08/21/13

Հավելված 2
ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու «Գեղարեգ» ԿՄԵ ՀԿ
Ծրագրի անուն «Ռիսկի գործոն»

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Համաֆինանսավորվող գումարը (ՀՀ դրամ)	Ընդհանուր Պահանջվող և Համաֆինանսավորվող գումարները
	Աշխատավարձ						
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**						
1.1	Ղեկավար	ամիս	2	132000	264000		264000
1.2	Համակարգող	ամիս	2	140000	280000		280000
1.3	Հաշվապահ	ամիս	2	120000	240000		240000
Ընդամենը Ա					**784000**		**784000**
Բ	**Ծրագրային ծախսեր**						
2.1	Լուսաբանում	անգամ	5	12000	60000		60000
2.2	Ֆորում- թատրոնի կազմակերպում	անգամ	5	75000	375000		375000
2.3	Տեխնիկայի վարձակալություն	անգամ	5	25000	125000		125000
2.4	Բաժակ տպագրված ծրագրի տարերանշանով եւ անվանումով	հատ	25	2500	62500		62500
2.5	Սկեչերի նկարահանում	հատ	12	20000	240000		240000
2.6	Երիտասարդական խոսնակ մենթոր	ամիս	2	70000	140000		140000
2.7	Տեխնիկայի վարձակալություն	անգամ	1	70000	70000		70000
2.8	Թերթոնի դիզայն	անգամ	1	50000	50000		50000
2.9	Թերթոնի տպագրություն	հատ	2000	100		200000	200000
Ընդամենը Բ					**1122500**	**200000**	**1 322 500**
Ընդամենը					**1906500**	**200000**	**2 106 500**
ԱԱՀ					**381300**		
ԸՆԴԱՄԵՆԸ					**2287800**		

ՀՀ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ		
1.1	Ղեկավար	264000	2 ամիս, 1 դրույք: Պարտականությունները ներկայացված են Ծրագրի աշխատակազմ հատվածում:
1.2	Համակարգող	280000	2 ամիս, 1 դրույք: Պարտականությունները ներկայացված են Ծրագրի աշխատակազմ հատվածում:
1.3	Հաշվապահ	240000	2 ամիս, 1 դրույք: Պարտականությունները ներկայացված են Ծրագրի աշխատակազմ հատվածում:
Ընդամենը Ա		784000	
	Ծրագրային ծախսեր		
2.1	Լուսաբանում	60000	Ծրագրի ընթացքի մասին լուսաբանում: Նկարահանում եւ ցուցադրություն «Գեղամա» մարզային հեռատեսեթերով:
2.2	Ֆորում- թատրոնի կազմակերպում	375000	Բնակչությանը անառողջ ապրելակերպ վարելու հետեւանքով առաջացող վտանգներին իրազեկելու նպատակով 5 ֆորում-թատրոնների կազմակերպում: Մանրամասները ներկայացված է համապատասխան գործողության մեջ:
2.3	Տեխնիկայի վարձակալություն	125000	Նախատեսված է վարձակալել 2 բարձրախոս, հեռակառավարվող 1 միկրոֆոն ֆորում- թատրոնների կազմակերպման նպատակով:
2.4	Բաժակ տպագրված ծրագրի տաբերանշանով եւ անվանումով	62500	Նախատեսված է «Երիտասարդ խոսնակ» միջոցառման մասնակիցներին եւ գործընկերներին խրախուսելու նպատակով: Տպագրված է լինելու ծրագրի տարբերանշանը, անվանումը, ֆինանսավորող եւ իրականացնող կազմակերպությունների անունները:
2.5	Սկեչերի նկարահանում	240000	Առողջ ապրելակերպի խթանմանը նպաստող 12 սկեչերի նկարահանում: 12 սկեչ * 20000= 240000 դրամ
2.6	Երիտասարդական խոսնակ մենթոր	140000	Աշխատելու է 2 ամիս: Ընտրվելու է մրհայտարարված մրցույթի արդյունքում: Հիմնական պարտականություններն են . թեմայի հստակեցում, ճիշտ ելույթի կառուցում, ելույթի, ռեմական խոսքի զարգացում, աշխատանք ռեմական կեցվածքի վրա:
2.7	Տեխնիկայի վարձակալություն	70000	Նախատեսված է վարձակալել 4 բարձրախոս, ձայնային 1 միքշեր, հեռակառավարվող 2 միկրոֆոն «Երիտասարդ խոսնակ» միջոցառման անցկացման նպատակով:

2.8	Թերթոնի դիզայն	50000	Տեղեկատվական թերթոնների դիզայն: A4 (10X21), երեք ծալք, երկկողմանի:
Ընդամենը Բ		1122500	
	Ընդամենը	1906500	
ԱԱՀ		381300	
ԸՆԴԱՄԵՆԸ		2287800	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Գեղարեգ» կրթամշակութային երիտասարդական ՀԿ
ՀՀ ք.Գավառ, Պետրոսյան 24
բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
«Գավառ» մ/ճ, հասցե՝ ք. Գավառ,
Հ/Հ 1150003164444463, ՀՎՀՀ 08418049
gdashtoyan@gmail.com
ՀԿ-ի ղեկավար՝
Գրիգոր Դաշտոյան

/ստորագրություն/

Կ.Տ.